

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն թիվ 6 (18/19)

Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գիտական խորհրդի 14.03.2019թ. կայացած նիստի

խորհրդի նիստին մասնակցում էին նրա 36 անդամներից 28-ը :

Օրակարգ՝

1. Հաղորդում ֆակուլտետի առաջ ծառայած խնդիրների և ԵՊՀ-ին առնչվող իրադարձությունների մասին:

Զեկ.՝ Խ.Վ. Ներկարարյան

2. Հաղորդում բազային ֆինանսավորման կարգի փոփոխման մասին:

Զեկ.՝ Վ.Ս. Առաքելյան

3. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ.

Լսեցին - Ֆակուլտետի առաջ ծառայած խնդիրների և ԵՊՀ-ին առնչվող իրադարձություններին վերաբերող հարցը:

Արտահայտվեցին - ֆակուլտետի դեկան, ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր Խ.Վ. Ներկարարյանը, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ.Ս. Մարտիրոսյանը, ԿԷՄ ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ա.Ժ. Բաբաջանյանը, ԿԷՄ ամբիոնի պրոֆ. Գ.Ս. Յաջյանը և ՌԷ ամբիոնի դոցենտ Ա.Յ. Մակարյանը :

Որոշեցին - Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գիտ. խորհուրդը կարևորում է ԵՊՀ-ի առջև ծառայած հետևյալ կոնկրետ խնդիրների լուծման ուղղությամբ կատարվող գործընթացների առաջնահերթությունը.

1. Նպատակային ուսուցման համակարգի ընդլայնում և զարգացում:
2. Բանակի և ռազմաարդյունաբերական համալիրի հետ ակտիվ համագործակցություն:
3. ԵՊՀ կրթական ծրագրերում ոչ մասնագիտական առարկաների թվի էական կրճատում:
4. Կրթության շարունակականության սկզբունքի իրականացում:
5. Դասախոսական կազմի ծանրաբեռնվածության կրճատման գործընթաց:

- 6. Կառավարության համապատասխան օղակների հետ համատեղ հանրակացարանային համալիրի ստեղծման ուղիների որոշակիացում:
- 7. Համալսարանների միջազգային դասակարգման սանդղակում ԵՊՀ-ի նիշի բարձրացում, ինչը կնպաստի նաև արտերկրից ժամանած ուսանողների առկայությանը:
- 8. ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կազմակերպման կանոնակարգի բարեփոխում:
- 9. Հետևողական գործընթաց ԵՊՀ-ին առնթեր վարժարանի ստեղծման նպատակով:

Ամրագրելով ԵՊՀ-ի դերը ՀՀ-ում իրականացվող բարեփոխումների գործընթացում, որպես տնտեսական, գիտական, մշակութային և քաղաքական էլիտայի ձևավորման կարևորագույն օղակի, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի գիտ. խորհուրդը գտնում է, որ ԵՊՀ-ին առնչվող իրադարձությունների զարգացումը պետք է ընթանա կառուցողական հունով՝ ծառայած կոնկրետ խնդիրների հանգամանալի վերլուծության և դրանց լուծումների հստակեցման ուղղությամբ:

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ.

Լսեցին – Կիսահաղորդչային սարքերի և նանոտեխնոլոգիաների կենտրոնի գործադիր տնօրեն Վ.Մ. Առաքելյանի զեկույցը բազային ֆինանսավորման կարգի փոփոխման մասին:

Արտահայտվեցին- ՀՀ ԳԱԱ նախագահ Ռ.Մ. Մարտիրոսյանը:

Որոշեցին.- հաղորդումն ընդունվեց ի գիտություն:

Օրակարգը սպառված է:

***Խորհրդի նախագահ,
Ֆ.վ.գ.դ., պրոֆեսոր***

Խ.Վ. Ներկարարյան

***Գլխավոր տնօրեն,
Ֆ.վ.գ.թ.***

Մ.Ս. Ալեքսանյան